Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. փետրվարի 25-ի թիվ 42-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 14
5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 18
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 20
7. Հետհսկողական գործընթաց - էջ 24
8. Առաջարկություններ - էջ 29
9. Հավելվածներ և այլ տեղեկատվություն - էջ 31

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 191-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հավապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1984-Ա որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի թիվ 297 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1330-Ն որոշում, ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական

հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1986 –Ն և 2005 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 2114 –Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1183-Ն որոշում և այլն:

Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը

2020 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 3-ը և 2020 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի հունվարի 31-ը՝ համաձայն ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի դեկտեմբերի 3-ի հաշվեքննության կասեցման մասին թիվ 205-Ա և ՀՀ հաշվեքննիչ պալատ 2020 թվականի դեկտեմբերի 25-ի հաշվեքննության վերսկսման մասին թիվ 248-Ա որոշումների:

Հաշվեքննության մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն: Իրականացված ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

3. **Ծրագիր 2** – (1045-120034) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

4. **Ծրագիր 3** – (1075-11004) «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագիր:

5. **Ծրագիր 4** – (1111-12003) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագիր:

6. **Ծրագիր 5** – (1146-12003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» (Պարտադիր կրթության երրորդ մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում) ծրագիր:

7. **Ծրագիր 6** – (1168 - 11003) «Արվեստների ծրագիր» (Թատերական ներկայացումներ) ծրագիր:

8. **Ծրագիր 7** – (1168 - 11004) «Արվեստների ծրագիր» (Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ) ծրագիր:

9. **Ծրագիր 8** – (1168 - 11001) «Արվեստների ծրագիր» (Օպերային և բալետային ներկայացումներ) ծրագիր:

10. **Ծրագիր 9** – (1192 - 32002) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում /ԿՏԱԿ/» ծրագիր:

11. **ԾՐԱԳՐԵՐ** - **Ծրագիր 1-ից Ծրագիր 9-ը** ներառյալ:

3. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ից 5-ում (Ծրագիր 3, Ծրագիր 5, Ծրագիր 6, Ծրագիր 7 և Ծրագիր 8) 2020թ. տարեկան պլանի և ճշտված պլանի միջև տարբերությունները կազմել են 3,594,469.4 հազ. դրամ, իսկ ինն ամիսների համար՝ 3,117,189.3 հազ. դրամ, որոնք հիմնավորված են ՀՀ կառավարության թվով 7 որոշումներով և թվով երկու՝ սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված ծանուցումներով: Նշված ծրագրերում 2020թ. ՀՀ տարեկան և ինն ամիսների պետական բյուջեի վերաբաշխումները տրված են Աղյուսակ 1-ում::

Աղյուսակ 1

Նախարարության թվով 5 ծրագրերի 2020 թ. տարեկան և ինն ամիսների պլանի և ճշտված պլանի տարբերությունների հիմնավորումների

(հազ. դրամ)

Թիվ	2020 թ. տարեկան			2020 թ. ինն ամիսներ			Հիմնավորումներ
	Պլան	Վերաբաշխում (+,-)	Ճշտված պլան	Պլան	Վերաբաշխում (+,-)	Ճշտված պլան	
1	2	3	4	5	6	7	8
Ծրագիր 3							
1	1,917,535.7	25,034.8	1,942,570.5	1,312,807.5	*15,358.8*	1,328,166.3	*ՀՀ կառ. 06.04.2020 թ. թիվ 528-Ն որոշում*
2	1,942,570.5	5,604.0	1,948,174.5	1,328,166.3	*5,604.0*	1,333,770.3	*ՀՀ կառ. 21.05.2020 թ թիվ 837-Ն որոշում:*
3	1,948,174.5	7,239.4	1,955,413.9	1,333,770.3	*7,239.4*	1,341,009.7	*ՀՀ կառ. 18.06.2020 թ թիվ 980-Ն որոշում:*
4	1,955,413.9	459,417.5	2,414,831.4	1,341,009.7	*459,417.5*	1,800,427.2	*ՀՀ կառ. 25.06.2020 թ թիվ 1075-Ն որոշում:*
5	2,414,831.4	43,761.0	2,458,592.4	1,800,427.2	*14,098.0*	1,814,525.2	*ՀՀ կառ. 03.09.2020 թ-ի թիվ 1473-Ն որոշում:*
6	2,458,592.4	110,685.2	2,569,277.6	1,814,525.2	*38,503.1*	1,853,028.3	*ՀՀ կառ. 17.09.2020 թ - թիվ 1539--Ն որոշում:*
7	2,569,277.6	36,838.3	2,606,115.9	-	-	-	*ՀՀ կառ. 17.09.2020 թ 10.12.2020թ.- թիվ 2048--Ն որոշում:*
8	2,606,115.9	7,549.5	2,613,665.4	-	-	-	*ՀՀ կառ. 27..12.2020թ. - թիվ 1919-Ն որոշում:*
	Ընդամենը՝	*659,291.4*		**Ընդամենը՝**	*540,220.8*		
1	2	3	4	5	6	7	8

Ծրագիր 5							
1	8,952,358.4	*0,0*	8,952,358.4	6,929,125.4	*-100,000.0*	6,829,125.4	*ՀՀ կառ. 07.05.2020թ. ի թիվ 709-Ն որոշում:*
	Ընդամենը՝	*0,0*		**Ընդամենը՝**	*-100,000.0*		
Ծրագիր 6							
1	1,808,703.2	7,344.0	1,816,047.2	1,295,926.4	7,344.0	1,303,270.4	*ՀՀ կառ . 21.05.2020 թ թիվ 837 -Ն որոշում:*
2	1,816,047.2	418,630.8	2,234,678.0	1,303,270.4	418,630.8	1,721,901.2	*ՀՀ կառ. 25.06.2020 թ թիվ 1075-Ն որոշում:*
3	2,234,678.0	22,644.0	2,257,322.0	1,721,901.2	7,295.0	1,729,196.2	*ՀՀ կառ. 03.09.2020 թ թիվ 1473-Ն որոշում:*
4	2,257,322.0	13,665.0	2,270,987.0	1,729,196.2	---	1,729,196.2	*Նախարարության կողմից ՀՀ Ֆ Ն ներկայացված ծանուցում թիվ 01/8-3/19002- 2020 գրություն 02.12.2020 թ*
	Ընդամենը՝	462,284.08		**Ընդամենը՝**	433,269.8		
Ծրագիր 7							
1	2,306,470.3	508,215.9	2,814,686.2	1,700,322.5	380,895.0	2,081,217.5	*ՀՀ կառ. 02.04.2020թ. **թիվ 481-Ն որոշում***
2	2,814,686.2	-25,034.8	2,789,651.4	2,081,217.5	-15,358.8	2,065,858.7	*ՀՀ կառ. 09.04.2020թ. **թիվ 452-Ն որոշում***
3	2,789,651.4	9,000.0	2,798,651.4	2,065,858.7	9,000.0	2,074,858.7	*ՀՀ կառ. 11.06.2020թ. **թիվ 941-Ն որոշում***
4	2,798,651.4	445,118.1	3,243,769.5	2,074,858.7	445,118.1	2,519,976.8	*ՀՀ կառ. 25.06.2020թ. **թիվ 1075-Ն որոշում***
5	3,243,769.5	7,193.7	3,250,963.2	-	-	-	*Նախարարության կողմից ՀՀ Ֆ Ն ծանուցում թիվ 01/08-3/19002-2020 գրություն*
6	3,250,963.2	42,924.0	3,293,887.2	2,519,976.8	13,829.0	2,519,976.8	*ՀՀ կառ. 03.09.2020թ. **թիվ 1473-Ն որոշում***
7	3,293,887.2	3,283.4	3,297,170.6	-	-	-	*ՀՀ կառ. 10.12.2020թ. **թիվ 2048-Ն որոշում***
1	2	3	4	5	6	7	8

8	3,297,170.6	24,261.9	3,321,432.5				ՀՀ կառ. 27.12.2019 թ. թիվ 1919-Ն որոշում:
	Ընդամենը՝	1,014,962.2		Ընդամենը՝	833,483.3		
Ծրագիր 8							
1	1,460,827.7	10,125.0	1,470,952.7	1,051,232.1	10,125.0	1,061,357.1	ՀՀ կառ. 21.05.2020 թ թիվ 837-Ն որոշում:
2	1,470,952.7	1,394,966.5	2,865,919.2	1,061,357.1	1,394,966.5	2,456,323.6	ՀՀ կառ. 25.06.2020 թ թիվ 1075-Ն որոշում:
3	2,865,919.2	15,902.0	2,881,821.2	2,456,323.6	5,124.0	2,461,447.6	ՀՀ կառ. 03.09.2020 թ թիվ 1473-Ն որոշում:
	Ընդամենը՝	1,410,215.5		Ընդամենը՝	1,420,993.5		
	Ամբողջը՝	3,594,469.4		Ամբողջը՝	3,117,189.3		

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ից 6-ում (բացառությամբ Ծրագիր 1-ի, Ծրագիր 8-ի և Ծրագիր 9-ի), 2020թ. ինն ամիսների ճշտված ճշտված պլանի և ֆինանսավորման միջև տարբերությունները կազմել են 212,104.5 հազ. դրամ: Թերֆինանսավորման պատճառները կապված են մի շարք հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 6-ում ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020 թ. ինն ամիսներ			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Թերֆինան-սավորում	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Ծրագիր 2	5,935,691.2	5,933,147.8	2,534.4	Տարբերությունը պայմանավորված է նպաստ ստացող միջին մասնագիտական կրթության ուսանողների փաստացի թվի նվազմամբ:
2	Ծրագիր 3	1,853,028.2	1,804,892.2	48,136.0	Տարբերությունը պայմանավորված է երկրում կորոնավիրուսային համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով:

1	2	3	4	5	6
3	**Ծրագիր 4**	**6,587,440.4**	**6,566,983.1**	**20,457,3**	Եռամսյա պլանավորումը ավել է նախատեսվել, իսկ ֆինանսավորումն իրականացվել է նպաստ ստացող ուսանողների փաստացի թվին համապատասխան:
4	**Ծրագիր 5**	**6,829,125.4**	**6,729,254.0**	**99,871.4**	Աշակերտների փաստացի թվով պայմանավորված և 2020թ. ՀՀ պետական բյուջեով հաստատված ու բանաձևով հաշվարկված գումարների տարբերություն:
5	**Ծրագիր 6**	**1,729,196.2**	**1,701,640,0**	**27,556.2**	Տնտեսումը պայմանավորված է «Խորեգրաֆիայի թատրոն» ՊՈԱԿ-ի հետ պայմանագրի բացակայությամբ, ԱԱՀ-ի վերադարձով, ինչպես նաև ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորությունների մարման գումարով:
6	**Ծրագիր 7**	**2,533,805.8**	**2,520,265.6**	**12,504.2**	Տնտեսումը պայմանավորված է ավելացված արժեքի հարկի վերադարձով (7.5 մլն. դրամ) և նախորդ տարիների ավելացված արժեքի հարկի գծով հարկային պարտավորությունների մարման գումարով, որի ֆինանսավորումն իրականացվել է հոկտեմբեր ամսի սկզբին:
Ընդամենը՝		**25,468,287.2**	**25,256,182.7**	**212,104.5**	

Ծրագիր 9-ում 2020թ. ինն ամիսների ճշտված ճշտված պլանի և ֆինանսավորման միջև առաջացած 2,428,655.5 հազ. դրամ տարբերությունը ունի հետևյալ պարզաբանումը.

ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված 571,153.4 հազ. դրամը բաշխված է միայն համաֆինանսավորման միջոցների մասով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի պլանը՝ ըստ վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարի: Ցուցանիշների համադրելիությունը ապահովելու համար անհրաժեշտ է ֆինանսավորուման մեջ ներառել նաև վարկային միջոցների ֆինանսավորման ցուցանիշը, որը հաշվետու ժամանակաշրջանում կազմել է 1,713,909.7 հազ. դրամ: 2020թ. ինն ամսվա ընթացքում մի կողմից համաֆինանսավորման և վարկային միջոցներից ստացված (1,713,909.7 հազ. դրամ) ֆինանսավորման հանրագումարի (2,285,063.1 հազ. դրամ), մյուս կողմից, 2,999,808.9 հազ. դրամ ճշտված պլանի միջև տարբերությունը կկազմի +714,745.8 հազ. դրամ (2,999,808.9 - /571,153.4 + 1,713,909.7/): Հիշյալ հանգամանքը բնորոշ է միայն վարկային միջոցների

ֆինանսավորման առանձնահատկությամբ և հատկացվում է նախորդ ժամանակաշրջանների փաստացի վճարումների հիման վրա:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ–ից թվով 2-ում (Ծրագիր 6 և Ծրագիր 7) 2020թ. ինն ամիսների ֆինանսավորման և դրամարկղային ծախսի միջև տարբերությունները կազմել են 4,160.5 հազ. դրամ, որի պատճառները պայմանավորված են ներքոհիշյալ հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 3):

Ծրագիր 9-ում 2020թ. ինն ամիսների ճշտված պլանի և դրամարկղային ծախսի 234,531.6 հազ. դրամ տարբերությունը հիմնականում պայմանավորված է ինչպես ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների նախատեսված ժամանակացույցերից որոշակի շեղմամբ, այնպես էլ լաբորատոր սարքավորումների ներմուծման համար նախապես հաշվարկված և փաստացի վճարված մաքսատուրքերի տարբերության չափով տնտեսմամբ:

Աղյուսակ 3

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 2 -ում ֆինանսավորման և դրամարկղային ծախսի տարբերության պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ. ինն ամիսներ			Տարբերության պատճառները
		Ֆինան-սավորում	Դրամար-կղային ծախս	Տարբերու-թյուն (+, -)	
1	Ծրագիր 6	1,701,640.0	1,699,610.0	2,030.0	Տնտեսումը՝ 4,160.5 հազ. դրամը, իբրև ընթացիկ գործունեության արդյունք, պայմանավորված է մի կողմից ճշտած պլանի և ֆինանսավորման, մյուս կողմից՝ ճշտած պլանի և դրամարկղային ծախսի միջև գոյացած տարբերությունների բացարձակ շեղմամբ:
2	Ծրագիր 7	2,520,265.6	2,518,135.1	2,130.5	
Ընդամենը՝		4,221,905.6	4,217,745.1	4,160.5	

Բացի այդ հաշվետու ժամանակաշրջանի բյուջեում նախատեսվում էր նաև դպրոցների համար համակարգչային սարքավորումների գնման նպատակով կնքված պայմանագրի շրջանակում կանխավճարի վճարում բանկային երաշխիքի դիմաց, սակայն մատակարար կազմակերպությունը նախընտրել է ամբողջական վճարումը

ստանալ ապրանքները մատակարարելուց հետո: Հիշատակված տարբերությունները պետք է կարգավորվեն 2020 թ. տարեկան կտրվածքով:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2020 թ. ինն ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի միջև ընդհանուր տարբերությունը կազմել է 774,383.89 հազ. դրամ, ընդ որում թվով 6 ծրագրերում (Ծրագիր 1, Ծրագիր 2, Ծրագիր 3, Ծրագիր 4, Ծրագիր 5 և Ծրագիր 7) դրամարկղային ծախսերը գերազանցել են փաստացի ծախսերին (ընդամենը՝ +1,366,889.7 հազ. դրամ), իսկ մնացած՝ թվով 3 ծրագրերում, փաստացի ծախսերն են գերազանցել դրամարկղային ծախսերին (ընդամենը՝ -592,478.8 հազ. դրամ):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում 2020թ. ինն ամիսների փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի, նվազումների համամասնությունները պայմանավորված են՝

1. Դեբիտորական պարտքերի գծով հիմնականում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցների մնացորդների և ապրանքանյութական պաշարների առկայությամբ, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերով կամ նվազումներով:

2. Կրեդիտորական պարտքերի գծով գերազանցապես 2020թ. սեպտեմբեր ամսվա հաշվարկված, բայց հոկտեմբերին վճարված աշխատավարձերի, արձակուրդային վճարների, կոմունալ ծախսերի, ինչպես նաև համաձայն ընդունման-հանձնման արձանագրությունների ուշացումների, հաշվետու ժամանակաշրջանի պլանավորված որոշ միջոցառումներ, գործառույթներ, աշխատանքներ և այլ ծախսեր չեն կատարվել՝ ելնելով երկրում սահմանված արտակարգ իրավիճակից:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում (բացի Ծրագիր 9-ը) 2020 թ. ինն ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում աղյուսակ 4-ում:

Նախարարության Ծրագիր 9-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև (տես՝ Աղյուսակ 5):

Աղյուսակ 4

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ. ինն ամիսներ						
		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբե-րություն (+, -)	Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)	Բացարձակ շեղում (+, -)	Սյունակ 8 – Սյունակ 7 (+,
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	Ծրագիր 1	1,765,499.4	1,652,135.85	- 113,363.6	180,548.7	67,185.1	113,363.6	*0,0*
2	Ծրագիր 2	5,933,147.8	5,324,562.5	- 608,585.3	808,254.6	195,233.3	608,585.4	*0,1*
4	Ծրագիր 4	6,566,983.1	6,426,658.5	- 140,324.6	140,225.3	136.0	140,361.2	*-36.6*
4	Ծրագիր 4	**6,566,983.1**	**6,426,658.5**	**- 140,324.6**	**140,225.3**	**136.0**	140,361.2	*-36.6*
5	Ծրագիր 5	**6,729,254.0**	**6,290,640.3**	**- 438,613.7**	**608,917.3**	**180,232.0**	428,685.0	*-9,928.7*
6	Ծրագիր 7	**2,518,135.1**	**2,496,693.4**	**-21,441.7**	**43,418.0**	**21,976.3**	21,441.7	*0.0*
Ընդամենը՝		**25,317,911.5**	**23,951,021.8**	**-1,366,889.7**	**1,855,409.2**	**498,411.5**	1,356,997.3	*-9,965.3*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*

7	Ծրագիր 6	1,699,610.0	1,701,982.2	+2,372.2	17,809.6	20,181.4	-2.371.8	*- 0,4*
8	Ծրագիր 8	2,461,447.6	2,550,695.3	+89,247.7	35,630.2	124,874.9	-89,247.7	0,0
Ընդամենը՝		4,161,057.6	4,252,677.5	+91,619.9	53,439.8	145,059.3	-91,619.5	*- 0,4*
Ամբողջը՝		29,478,969.1	28,203,699.3	-1,275,269.8	1,908,849.0	643,6467.8	+ 1,265,378.1	*-9,891.7*

Ծրագիր 9-ում փաստացի և դրամարկղային ծախսերի միջև 500,885.9 հազ. դրամ տարբերությունը պայմանավորված է հետևյալ երեք հանգամանքներով.

1) Համաձայն կապալառուների հետ կնքված պայմանագրերի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների կատարողական ակտերից համամասնորեն մարվել են 2019թ. փոխանցված կանխավճարային գումարները, ինչպես նաև կապալառուների կողմից ներկայացրած յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից պահվել է երաշխիքային գումար 5%-ի չափով մինչև հիմնանորոգման աշխատանքների վերջնական ավարտը՝ 2021թ.:

2) Ըստ լաբորատոր սարքավորումների մատակարարման պայմանագրերի մատակարարած սարքավորումների գումարներից մարվել են 2019թ. փոխանցված կանխավճարային գումարները;

3) Համաձայն լաբորատոր գույքի մատակարարման պայմանագրերի պայմանագրային արժեքների 5% վճարումը նախատեսված է 2020թ. չորրորդ եռամսյակում՝ պայմանագրերով նախատեսված հարակից ծառայությունների ավարտից հետո:

Արդյունքում Ծրագիր 9-ի 2020թ. ինն ամիսների դրամարկղային ծախսի գերազանցումը ֆինանսավորմանը (480,214.2 հազ. դրամ համադրելի տարբերությամբ), ինչպես նաև փաստացի ծախսի գերազանցումը դրամարկղային ծախսին (500,855.9 հազ. դրամ, պետական բյուջեի և վարկային միջոցների հանրագումար) վերաբերում են վարկային միջոցների չափաբաժնին, իսկ դրամարկղային ծախսը գերազանցել է փաստացի ֆինանսավորման չափին նախորդ տարվա վարկային միջոցների առկա մնացորդի հաշվին:

Աղյուսակ 5

Նախարարության Ծրագիր 9-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

2020թ. ինն ամիսներ						
Դրամար-կղային ծախս	**Փաստացի ծախս**	**Տարբերություն (+, -)**	**Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)**	**Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)**	**Բացարձակ շեղում (+, -)**	**Սյունակ 3 – Սյունակ 6 (+, -)**
1	2	3	4	5	6	7
2,765,277.3 *Այդ թվում՝* *ՀՀ պետական բյուջեից՝* **571,153.4** *Վարկային միջոցներից՝* **2,194,123.9**	**3,266,163.2** *Այդ թվում՝* *ՀՀ պետական բյուջեից՝* **571,153.4** *Վարկային միջոցներից՝* **2,659,009.8**	**500,885.9** *այդ թվում՝* *ՀՀ պետական բյուջեից՝* **0,0** *Վարկային միջոցներից՝* **500,885.9**	**-60,187.2** *այդ թվում՝* *ՀՀ պետական բյուջեից՝* **0,0** *Վարկային միջոցներից՝* **-60,187.2**	**+39,985.8** *այդ թվում՝* *ՀՀ պետական բյուջեից՝* **0,0** *Վարկային միջոցներից՝* **+39,985.8**	**100,172.9** *այդ թվում՝* *ՀՀ պետական բյուջեից՝* **0,0** *Վարկային միջոցներից՝* **100,172.9**	**400,713.0**

4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2020 թ. ինն ամիսների ընդհանուր պլանը կազմել է 29,577,853.8 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 32,695,043.1 հազ. դրամ, ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 30,054,283.1 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 32,244,246.4 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 31,469,862.5 հազ. դրամ:

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020 թ. տարեկան ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են աղյուսակ 6-ում, իսկ Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ . ինն ամիսների ֆինանսական ցուցանիշները՝ աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020 թվականի տարեկան ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	Տարեկան պլան	Փոփոխու-թյուններ տարեկան պլանում ՀՀ կառավարու-թյան կողմից	Տարեկան ճշտված պլան	**2020 թ. ինն ամիսների** դրամարկղային ծախսը	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Տարեկան պլանի մնացորդ՝ 2020թ. ինն ամիսների դրությամբ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
Նախարարություն (104010)	**74,167,479.7**	**6,574,445.4**	**80,741,925.1**	**53,166,295.1**	**65,9**	**27,575. 630,0**
Նախարարության Ծրագիր 1	**2,522,142.0**	--	**2,522,142.0**	**1,765,499.4**	**70,0**	**756,642,6**
Նախարարության Ծրագիր 2	**8,479,558.8**	--	**8,479,558.8**	**5,9331,47.8**	**70,0**	**2,546,411.0**
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*

Նախարարության Ծրագիր 3	1,917,535.7	659,291.4	2,613,665.4	1,804,892.2	71,9	771,934.9
Նախարարության Ծրագիր 4	10,0567,160.9	--	10,0567,160.9	6,566,983.1	65,5	3,490,177.8
Նախարարության Ծրագիր 5	8,952,358.4	--	8,952,358.4	6,729,254.0	76,3	2,223,104.4
Նախարարության Ծրագիր 6	1,808,703.2	448,618.8	2,257,322.0	1,699,610.0	76,6	557,712.0
Նախարարության Ծրագիր 7	2,306,470.3	1,014,962.2	3,310,955.4	2,518,135.1	76,5	792,820.3
Նախարարության Ծրագիր 8	1,460,827.7	1,420,993.5	2,881,821.2	2,461,447.6	85.4	420,373.6
Նախարարության Ծրագիր 9	3,087,195.1	--	3,087,195.1	2,765,277.3	97.2	321,917.8
Ընդամենը ԾՐԱԳՐԵՐ՝	**40,591,952.1**	**3,580,704.2**	**44,172,656.3**	**32,244,246.2**	**74,1**	**11,881,094.5**

Աղյուսակ 7

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020 թ. ինն ամիսների ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, *(ծածկագիրը)*	2020 թվականի ինն ամիսներ						*Կատարման %-ը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ*
	Պլան	Փոփոխություններ տարեկան պլանում ՀՀ կառավարության կողմից	Ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
Նախարարություն **(104010)**	**54,873,211.7**	**4,751,036.3**	**59,624,248.0**	**52,799,728.5**	**53,166,295.1**	**52,335,669.1**	***89.2***
Նախարարության Ծրագիր 1	**1,765,499.4**	--	**1,765,499.4**	**1,765,499.4**	**1,765,499.4**	**1,7652,135.9**	***100,0***
Նախարարության Ծրագիր 2	**5,935,691.2**	--	**5,935,691.2**	**5,933,147.1**	**5,933,147.1**	**5,324,1562.5**	***100,0***
Նախարարության Ծրագիր 3	**1,312,807.5**	**540,220.7**	**1,853,028.2**	**1,804,892.2**	**1,804,892.2**	**1,760,331.4**	***97,4***
Նախարարության Ծրագիր 4	**6,587,440.4**	--	**6,587,440.4**	**6,566,983.1**	**6,566,983.1**	**6,426,658.5**	***99,7***
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*

Նախարարության Ծրագիր 5	6,929,125.4	-100,000.0	6,829,125.4	6,729,254.0	6,729,254.0	6,290,640.3	*98,5*
Նախարարության Ծրագիր 6	1,295,926.4	433,269.8	1,729,196.2	1,701,640.0	1,699,610.0	1,701,982.2	*98,3*
Նախարարության Ծրագիր 7	1,700,322.5	833,483.3	2,533,805.8	2,520,265.6	2,518,135.1	2,469,693.4	*99,4*
Նախարարության Ծրագիր 8	1,051,232.1	1,410,215.5	2,461,447.6	2,461,447.6	2,461,447.6	2,250,695.3	*100,0*
Նախարարության Ծրագիր 9	2,999,808.9	--	2,999,808.9	517,153.4	2,765,277.3	3,266,163.2	*92,2*
Ընդամենը ԾՐԱԳՐԵՐ՝	**29,577,853.8**	**3,117,189.3**	**32,695,043.1**	**30,054,283.1**	**32,244,246.4**	**31,469,862.5**	***98,6***

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են Նախարարության ենթակայության «Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Կենտրոն), «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Թատրոն), «Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Թանգարան) և «Երևանի Գ. Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ–ի (այսուհետ՝ Դպրոց) կողմից 2020թ. ինն ամիսների ընթացքում կատարված գնումների գործընթացները:

Հաշվեքննության արդյունքում պարզվեց, որ.

1. Կենտրոնի «Գնանշման հարցում» ընթացակարգով կատարված գնման ընթացքում «Procurement. am» տեղեկագրում չի հրապարակել հայտերի գրանցման գրանցամատյանի բնօրինակից արտատպված տարբերակը և շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակից արտատպված տարբերակը: Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջների հետ:

2. Կենտրոնը և Թանգարանը «Մեկ անձ» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում բացի պայմանագիր կնքելու որոշման մասին և կնքված պայմանագրի մասին հայտարարություններից, այլ տեղեկություններ չեն հրապարակել «Procurement. am» տեղեկագրում: Առկա են անհամապատասխանություններ Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2–րդ ենթակետի պահանջների հետ:

3. Կենտրոնը «Մեկ անձ» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով հրավեր ուղարկել է միայն մեկ անձի: Առկա են անհամապատասխանություններ Որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1–ին ենթակետի «Դ» պարբերության պահանջների հետ:

4. Կենտրոնը և Թատրոնը 2020թ-ի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չեն հայտարարել, շարունակել է օգտվել ծառայություններից նախորդ տարիներին կնքված պայմանագրերի հիման վրա: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի «Գ» ենթակետի, 3-րդ և 4-րդ կետի պահանջների հետ:

5. Թատրոնի կողմից «Մեկ անձ» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում «Procurement. am» տեղեկագրում չեն հրապարակվել գնման հրավերները, պայմանագիր կնքելու մասին հայտարարությունները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջների հետ:

6. Թատրոնում և Թանգարանում բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

Նշված վերոհիշյալ վեց անհամապատասխանությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտը տվել է բացատրություններ և մեկնաբանություններ, որոնք արձանագրված անհամապատասխանությունների հետ առընչություն չունեն:

7. Նախարարությունը ուսանողական նպաստ տրամադրելու մասին Ծրագիր 1-ի թվով 53 (ընդհանուր 2,040,240.0 հազ. դրամ) և Ծրագիր 2-ի թվով 79 (ընդհանուր տարեկան 7,293,211.1 հազ. դրամ) ՊՈԱԿ-ների հետ 2020թ. կնքված տարեկան պայմանագրերի (վերաբաշխումների) 2.1 կետերով նախատեսված ֆինանսավորման ենթակա ուսանողական նպաստների գումարաչափերի (ուսման վարձերի փոխհատուցում) հաշվարկման մոտեցումները և մեխանիզմները, կիրառվող բանաձևերը, օգտագործված գործակիցները և ստացվող ֆինանսավորումները որևէ իրավական ակտերով հիմնավորված և կանոնակարգված չեն:

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունը.

Հաշվեքննության օբյեկտը պարզաբանել է, որ Նախարարությունն առաջնորդվել է միջնաժամկետ ծախսային ծրագրի բանաձևերով:

ՀՀ հաշվեքննիչ պալատի արձագանքը.

Հաշվեքննության օբյեկտի կողմից տրված բացատրությունը չի համապատասխանում «Բյուջետային համակարգի մասին» և «ՀՀ 2020թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքներով տարեկան ֆինանսավորումներին վերաբերող պահանջներին:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ

ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

6.1 Նախարարության 2020թ. ինն ամիսների Ծրագիր 1-ի (թվով 53 կազմակերպություններ) և Ծրագիր 2-ի (թվով 79 կազմակերպություններ) ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչները ներկայացվում են ստորև (տես՝ Աղյուսակ 8):

(Աղյուսակ 8)

Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի 2020 թ. ինն ամիսների ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ

Թիվ	Արդյունքի չափորոշիչներ	Ծրագրեր	2020թ. ինն ամիսներ			
			Ճշտված պլան *(Միջին տարեկան)*	Փաստացի	Տարբերություն	*Տեսակարար կշիռ (%)*
1	Ուսանողական նպաստ ստացող ուսանողներ ***(Մարդ)***	**Ծրագիր 1**	**8300**	**6486**	**-1814**	***-21,9***
		Ծրագիր 2	**22229**	**19547**	**-2732**	***-12,1***
		Ընդամենը՝	**30529**	**26033**	**-4546**	***-17,5***
2	Կարիերայի կենտրոնների ծառայություններից օգտված սովորողներ և շրջանավարտներ ***(Մարդ)***	**Ծրագիր 1**	**1700**	**1727**	**+27**	***+1.6***
		Ծրագիր 2	**5300**	**8723**	**+3423**	***+39,3***
		Ընդամենը՝	**7000**	**10450**	**+3450**	***+39,6***

Ծրագիր 1-ում և Ծրագիր 2-ում ուսանողական նպաստ ստացող սովորողների, ինչպես նաև կարիերայի կենտրոնների ծառայություններից օգտված սովորողների և շրջանավարտների թվաքանակների տարբերությունները պայմանավորված են ՀՀ-ում համավարակով պայմանավորված հայտարարված արտակարգ դրությամբ և նպաստ ստացող ուսանողների փաստացի թվերով:

Նախարարության Ծրագիր 1-ի համեմատությունների համար հիմք են հանդիսացել հետևյալ միջինները՝

- Մեկ ուսումնարանի ուսանողների միջին թիվը հանրապետությունում՝ 107.3 մարդ:
- Ուսումնարանի մեկ սովորողի հաշվով տարեկան ֆինանսավորման միջին գումարը հանրապետությունում՝ 310,4 հազ. դրամ:

6.2 Նախարարության Ծրագիր 3-ի 2020թ. ինն ամիսների ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչները ներկայացվում են ստորև: (Աղյուսակ 9)

(Աղյուսակ 9)

Նախարարության Ծրագիր 3- ի արդյունքային ոչ ֆինանսական չափորոշիչների տվյալներ

Ծրագիր 3- ի արդյունքի չափորոշիչներ *(ոչ ֆինանսական տվյալներ)*	**Տարեկան ճշտված պլան**	**2020թ. ինն ամիսներ**		
		Ճշտված պլան *(նախատես-ված)*	**Փաս-տացի**	**Տարբե-ություն**
1. Պահպանվող թանգարանային առարկաներ ***(քանակ)***	*1934602*	**1933891**	**1972491**	***38600***
2. Պահպանվող գրադարանային առարկաներ ***(թիվ)***	*254147*	**254087**	**254141**	***54***
3. Սպասարկվող թանգարանային այցելուներ ***(քանակ)***	*1112714*	**880170**	**257374**	- ***622796***
4. Սպասարկվող գրքեր (***միավոր)***	*3500*	**2300**	**997**	***-1303***
5. Սպասարկվող ընթերցողներ ***(քանակ)***	*1070*	**660**	**273**	***-387***
6. Ձեռքբերված գրադարանային միավորներ (***թիվ)***	*135*	**60**	**47**	***-13***
7. Թանգարանային առարկաների համալրում ***(թիվ)***	*2195*	**1417**	**3247**	***1830***
8. Կազմակերպվող ցուցահանդեսներ ***(թիվ)***	*205*	**132**	**85**	***-47***
9. Թանգարանային առարկաների վերականգնում ***(թիվ)***	*481*	**401**	**2383**	***1982***
10.Վերապատրաստումներ (***քանակ)***	*3*	**2**	**0**	***-2***
11.Վերապատրաստումներին մասնակցած մասնագետներ (***քանակ)***	*50*	**30**	**0**	***-30***
12. Համերգների քանակ	*12*	**7**	**0**	***-7***
13. Հանդիսատեսի թվաքանակ	*2016*	**1176**	**0**	***-1176***

Հաշվեքննությամբ պարզվեց, որ թվով 13 ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչներից 4–ում նախատեսված ցուցանիշները աճել են՝ կապված համալրվող պահպանվող թանգարանային և գրադարանային առարկաների նվիրատվությունների և այլ միջոցների շնորհիվ, ինչպես նաև՝ թանգարանային առարկաների համալրումներն ու վերականգնումները ներկայացվել են փաստացի թվաքանակներով:

Մնացած թվով 5 արդյունքի չափորոշիչների տողերում արձանագրվել են նվազման, իսկ թվով 4-ում՝ զրոյական տվյալներ (այցելուները նվազել են՝ 622796 մարդով), ինչը պայմանավորված է եղել հանրապետությունում կորոնավիրուսային համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով, ինչպես նաև՝ մի շարք միջոցառումներ տեղափոխվել են 2020 թ. չորրորդ եռամսյակ:

6.3 Նախարարության Ծրագիր 7-ի և Ծրագիր 8-ի ոչ ֆինանսական արդյունքի չափորոշիչները ներկայացվում են ստորև (տես՝ Աղյուսակ 10):

(Աղյուսակ 10)

Ծրագիր 7-ի և Ծրագիր 8–ի արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ

Արդյունքի չափորոշիչներ	**Ծրագրեր**	**Տարեկան ճշտված պլան** *(Նախա-տեսված)*	**2020թ. ինն ամիսներ**			
			Ճշտված պլան *(Նախա-տեսված)*	**Փաս-տացի**	**Տարբե-ություն (+,-)**	**Տեսակա-ռար կշիռ (%)**
1. Ներկայացումների (համերգների) քանակ (հատ)	Ծրագիր 6	**2052**	**1409**	**557**	**- 852**	**60,5**
	Ծրագիր 7	**454**	**347**	**64**	**- 283**	*18.4*
	Ծրագիր 8	**100**	**70**	**22**	**- 48**	*31.4*
	Ընդամենը՝	***2606***	***1826***	***643***	***- 1183***	***63,2***
2. Հանդիսատեսի թվաքանակ (մարդ)	Ծրագիր 6	**339535**	**222554**	**80796**	**-141758**	**63,7**
	Ծրագիր 7	**146248**	**110394**	**21124**	**-88270**	*19.1*
	Ծրագիր 8	**58850**	**41195**	**8841**	**- 32354**	*21.5*
	Ընդամենը՝	***544633***	***374143***	***110761***	***- 262382***	***70.1***
3. Նոր ներկայացումների քանակ (հատ)	Ծրագիր 6	**45**	**28**	**15**	**-13**	**46,4**
	Ծրագիր 7	**20**	**18**	**10**	**- 8**	*55.6*
	Ծրագիր 8	**4**	**2**	**0**	**- 2**	*0.0*
	Ընդամենը՝	***69***	***48***	***25***	**- 23**	***48,0***
4. Դահլիճի միջին բեռնվածություն (%)	Ծրագիր 6	**63.2**	**59,8**	**51,0**	**- 8,8**	**14,7**
	Ծրագիր 7	**65,0**	**65,0**	**52,4**	**- 12,6**	***19.3***
	Ծրագիր 8	**55,0**	**55,0**	**21.5**	**33.5**	***39.1***
	Միջինը՝	**61,1**	**60,0**	**41,6**	**- 18,3**	**24,4**
5. Դպրոցական ֆիլհարմոնիայի գործունեություն Երևանում, մարզերում, համերգ-դասախոսությունների քանակ ***(հատ)***	Ծրագիր 7	**45**	**12**	**6**	**-6**	*50.0*

6.3 Ծրագիր 6-ում, Ծրագիր 7-ում և Ծրագիր 8-ում 2020թ. ինն ամիսների ներկայացումների քանակների 1183-ով (63,2%), հանդիսատեսների թվաքանակների 262382-ով (70,1%), նոր ներկայացումների քանակների 23-ով (31,4%) (Ծրագիր 8–ում՝ զրոյական), ինչպես նաև Ծրագիր 7-ում՝ դպրոցական ֆիլհարմոնիայի գործունեություն

Երևանում, մարզերում, համերգ-դասախոսությունների 6-ով (50,0%) նվազման պայմաններում, նույն ժամանակահատվածի փաստացի ծախսերը Ծրագրերով ընդհանուր 70,178.2 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսերին:

6.4 ՀՀ հաշվեքննի պալատի 2021 թվականի հունվարի 8-ի թիվ ՀՊԵ Ա Բ 159 գրությամբ հաշվեքննության օբյեկտին ուղղված հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը պահանջվել, սակայն Նախարարության 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 01/17.2/843-21 և փետրվարի 1-ի թիվ 01/10.1/1360-21 գրություններով ստացված նյութերում առկա են չտրամադրման, ժամկետների խախտման, ոչ ամբողջական, թերի կամ ձևաչափերին ոչ համապատասխան դեպքեր:

Հաշվեքննության օբյեկտի բացատրությունը.

Հաշվեքննության օբյեկտը ներկայացրել է, որ պահանջվող տեղեկատվությունը էլեկտրոնային կրիչով Հանրակրթություն թղթապանակի մեջ ներկայացվել է խմբի ղեկավարին:

ՀՀ հաշվեքննիչ պալատի արձագանքը.

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից փաստաթղթավորվել է ներկայացված տեղեկատվությունը, 2020թ. փետրվարի 2-ին կազմվել է Նախարարությունից ստացված տեղեկատվության տրամադրման նյութերի վերաբերյալ արձանագրություն, ըստ որի Նախարարությունը չի ներկայացրել (1111-12004) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» և (1146-11003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» ծրագրերով պահանջվող տեղեկատվությունը:

Արձանագրության բովանդակությունը ներկայացված է Հավելված 1-ում:

6.5 Դպրոցի կողմից «Մեկ անձ» գնման ընթացակարգով կատարված գնումների վերաբերյալ հաշվեքննությամբ պահանջվող և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող տեղեկատվությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին չի տրամադրվել:

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են միայն պարզաբանումներ և բացատրություններ:

6.6 Նախարարության գլխավոր քարտուղարի 2021թ. փետրվարի 15-ի թիվ 04/13/2461-21 գրությամբ ներկայացվել է «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախում» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի փետրվարի 6-ի թիվ 20/21 գրությունը, ըստ որի «Նվագախմբի աշխատակիցների անձնական տվյալների տրամադրումը Հաշվեքննիչ պալատին օրենքով թույլատրելի չէ, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

սահմանված չեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները»:

ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից պարզաբանումը չի ընդունվում:

2021 թվականի փետրվարի 15-ի թիվ 04/13/2461-21 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախում» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի փետրվարի 6-ի թիվ 20/21 գրության համաձայն՝ նվագախմբի աշխատակիցների անձնական տվյալների տրամադրումը Հաշվեքննիչ պալատին օրենքով թույլատրելի չէ, քանի որ «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չեն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածը կարգավորում է անձնական տվյալները երրորդ անձանց փոխանցելու հետ կապված հարաբերությունները, որը տվյալ դեպքում կիրառելի չէ հետևյալ հիմնավորմամբ.

Համաձայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի՝ երրորդ անձ է համարվում ցանկացած անձ, մարմին, հիմնարկ կամ կազմակերպություն, որը չի հանդիսանում տվյալների սուբյեկտ, անձնական տվյալների մշակող կամ լիազորված անձ, և որի իրավունքները կամ օրինական շահերը շոշափվում կամ կարող են շոշափվել անձնական տվյալները մշակելու արդյունքում:

Հաշվեքննիչ պալատը տվյալ դեպքում չի համարվում երրորդ անձ, այլ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 5-րդ կետերի իմաստով հանդիսանում է անձնական տվյալների մշակող (**անձնական տվյալների մշակում՝** անկախ իրականացման ձևից և եղանակից (այդ թվում՝ ավտոմատացված, տեխնիկական ցանկացած միջոցներ կիրառելու կամ առանց դրանց) ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ, որը կապված է անձնական տվյալները հավաքելու կամ ամրագրելու կամ մուտքագրելու կամ համակարգելու կամ կազմակերպելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ վերափոխելու կամ վերականգնելու կամ փոխանցելու կամ ուղղելու կամ ուղեփակելու կամ ոչնչացնելու կամ այլ գործողություններ կատարելու հետ: **Անձնական տվյալներ մշակող՝** պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային հիմնարկ կամ կազմակերպություն, իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը կազմակերպում և (կամ) իրականացնում է անձնական տվյալների մշակում: Հաշվեքննիչ պալատը հաշվեքննության շրջանակում կատարում է **անձնական տվյալների հավաքում և օգտագործում՝ կարծիք ձևավորելու նպատակով**:

Հարկ է նշել որ, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի աշխատակիցների՝ մեր կողմից ներկայացված ձևաչափով պահանջվող անձնական տվյալները կարող են տրամադրվել առանց աշխատակիցների (տվյալների սուբյեկտի) համաձայնության, քանի որ հաշվեքննության իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը և օգտագործումն ուղղակիորեն նախատեսված է «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով և 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Թիվ	Առաջարկություններ	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
Անհամապատասխանությունների վերացման առաջարկություններին վերաբերող մասով				
1. Առաջարկվում է Նախարարությանը հսկողություն սահմանել իր ենթակայության օբյեկտների վրա գնման գործընթացների օրինականության պահպանման առումով, մասնավորապես.				
1.1	Գնման հրավերները, պայմանագիր կնքելու հայտարարությունները, կնքված պայմանագրերի մասին հայտարարությունների ժամկետները, պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող և հաստատվող գնման հայտերը, ընտրված մասնակցի վերաբերյալ որևէ տեղեկատվությունը, ինչպես նաև՝ գնահատող հանձնաժողովի գործառույթները իրականացնել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1-ին ենթակետի և 6-րդ բաժնի 30-րդ կետի պահանջներին համապատասխան:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Արձանագրվածը չի վերաբերվում Նախարարության գնումներին, այլ վերաբերում է ենթակա կազմակերպություններին: Նախարարությունը համապատասխան գրությամբ կդիմի ՊՈԱԿ-ներին
1.2	Գնումների տարեկան պլանով սահմանված չափաբաժինների տրոհմամբ պայմանավորված գնումները համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 4-րդ բաժնի 16-րդ կետի պահանջների հետ:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Արձանագրվածը չի վերաբերվում Նախարարության գնումներին, այլ վերաբերում է ենթակա կազմակերպություններին: Նախարարությունը համապատասխան գրությամբ կդիմի ՊՈԱԿ-ներին:
1.3	Կոմիտեի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային ծառայությունների մասով գնումների ընթացակարգերը, ինչպես նաև գնման ընթացքում անգործության ժամկետի հետ կապված գործառույթները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Արձանագրվածը չի վերաբերվում Նախարարության գնումներին, այլ վերաբերում է ենթակա կազմակերպություններին: Նախարարությունը համապատասխան գրությամբ կդիմի ՊՈԱԿ-ներին

1.4	Գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-ին մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Արձանագրվածը չի վերաբերվում Նախարարության գնումներին, այլ վերաբերում է ենթակա կազմակերպություններին: Նախարարությունը գրությամբ կդիմի համապատասխան ՊՈԱԿ-ներին:
2	Առաջարկվում է Նախարարությանը վերահսկել ավագ դպրոցների տարեկան ֆինանսավորման հաշվարկների վրա, դրանք համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշմամբ սահմանված բանաձևի, գործակիցների, իրավակարգավորումների և կանոնակարգերի կիրառման հետ:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	ՀՀ ԿԳՄՍ նախարարի 31.01.2020 թվականի 73-Ա/2 հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետում Սգ2-ը սահմանված է 1082282.06 դրամ, որը իրականում բաղկացած է Սգ1-ից և 80775.8 դրամ տարրերից: Սգ2-ը ստանալու համար Սգ1-ի վրա անհրաժեշտ է կիրառել համապատասխան գործակիցները, այնուհետև գումարել 80775.8-ը, ինչը հրամանի նշված ենթակետում ճիշտ ձևակերպում չի ստացել: Քննարկումների արդյունքները կներկայացվեն մինչև տարեվերջ:
3	Առաջարկվում է Նախարարությանը՝ ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, միջոցառումներ ձեռնարկել ստեղծելու համար Նախարարության Ծրագիր 1-ի, Ծրագիր 2–ի, Ծրագիր 4-ի, Ծրագիր 6-ի և Ծրագիր 10-ի շահառուների անհատական տվյալների առանձնացված բազաներ՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկվող ֆորմատներով:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարությունը ընդունել է ի գիտություն: Հաշվի առնելով, որ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է պետության կողմից լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների անհատական տվյալներին, որոնք նախարարությունը չի մշակում, լրացուցիչ ժամանակ է անհրաժեշտ դրանք բուհերից ստանալու և ներկայացնելու համար:
Ընթացիկ եզրակացության այլ գրավոր տեղեկատվությանը վերաբերող մասով				
4	Նախարարության կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված տեղեկատվության (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, Հավելվածներ 2-1, 2-2) համաձայն Ծրագիր 2-ի կազմակերպությունների քանակը 79-ն է, իսկ համապատասխան ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները չեն համապատասխանում Նախարարության կողմից հաստատագրված տվյալների հետ, առկա են տարբերություններ, մասնավորապես, 2020 թ.-ի առաջին կիսամյակի փաստացի ծախսի՝ 3,283.0 հազար դրամ (3,650,519.0 հազ. դրամ - 3,617,680.0 հազ. դրամ), դեբիտորական պարտքի՝ 32,796.8 հազ. դրամ (537,302.1 հազ. դրամ - 504,505.2 հազ. դրամ), կրեդիտորական պարտքի՝ 42.0 հազ. դրամ (153,546.2 հազ. դրամ - 153,504.2 հազ. դրամ) և սովորողների թվի 48 (17558-17510) ներկայացված տվյալները:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարության կողմից կատարվել են ճշգրտումներ:

5	Նախարարության Ծրագիր 4-ի 2020թ. առաջին կիսամյակի դրությամբ ըստ նպաստների տարրակազմի, թվով 15 տեսակների բաշխման և բազայավորման կարգավիճակի, տեղեկատվությունը ՀՀ հաշվեքննիչ պալատին չեն տրամադրվել:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարությունը ընդունել է ի գիտություն: Հաշվի առնելով, որ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է պետության կողմից լրիվ կամ մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների անհատական տվյալներին, որոնք նախարարությունը չի մշակում, լրացուցիչ ժամանակ է անհրաժեշտ դրանք բուհերից ստանալու և ներկայացնելու համար:
6	Նախարարության Ծրագիր 5-ի թվով 108 ավագ դպրոցներում, ըստ ներկայացված ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչների նախատեսված 31374 աշակերտների դիմաց փաստացին կազմել է 29611 (տարբերությունը՝ 1763 աշակերտ): Համաձայն Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության ավագ դպրոցների աշակերտների 2020թ.-ի առ 01 հուլիսի 2020 թ.-ի փաստացի թիվը կազմում է 29611 (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, հավելված 5-2), սակայն ոչ ֆինանսական տեղեկատվությամբ այն կազմում է 29547 (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, հավելված 5-3), 64 աշակերտների տարբերությունը վերաբերում է «Հայաստանի պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի աշակերտների փաստացի թվին: Միաժամանակ, ավագ դպրոցների Նախարարության կողմից տրամադրված նյութերում բացակայում են «Ավագ դպրոցներ» և «Առանձին գործող ավագ դպրոցներ» սյունակների պահանջվող տեղեկատվությունը, որոնք համարվում են ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշմամբ հաստատված բանաձևի տարեկան ֆինանսավորման գործակիցների բաղադրիչներ:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Թվով 108 ավագ դպրոցների հանրագումարով ստացվում է 4,328,591.8 հազար դրամ, որը ավել է նախարարության կողմից հաստատագրված փաստացի ծախսի 4,317,488.0 հազար դրամից (տարբերությունը՝ +11,103.8 հազար դրամ): Այս տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ութ ավագ դպրոց իրենց արտաբյուջեի պարտքը ներառել են բյուջեի դեբիտորական պարտքի մեջ, ինչպես նաև արտաբյուջեի կրեդիտորական պարտքը՝ բյուջեի կրեդիտորական պարտքի մեջ: Կատարվել է ճշգրտում: ՀՀ ԿԳՄՍ նախարարի 31.01.2020 թվականի 73-Ա/2 հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետում Սգ2-ը սահմանված է 1082282.06 դրամ, որը իրականում բաղկացած է Սգ1-ից և 80775.8 դրամ տարրերից: Սգ2-ը ստանալու համար Սգ1-ի վրա անհրաժեշտ է կիրառել համապատասխան գործակիցները, այնուհետև գումարել 80775.8-ը, ինչը հրամանի նշված ենթակետում ճիշտ ձևակերպում չի ստացել: Քննարկումների արդյունքները կներկայացվեն մինչև տարեվերջ:

7	Նախարարության Ծրագիր 6-ի թվով 36 մարզադպրոցներում ըստ 2020թ.-ի առաջին կիսամյակի համար ներկայացված ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչների թվով 9135 սաների նախատեսված ցուցանիշը փաստացի կազմել է 9170: Թվով 35 սաների (1.1 %) դրական տարբերությունը պայմանավորված է արվեստի, երաժշտության, սպորտի դասընթացների մարզադպրոցներում, ստեղծագործական և այլ արտադպրոցական դաստիարակության թվով 10 կենտրոններում արձանագրված սաների փաստացի թվի տարբերությամբ (Տես՝ Հավելված 2): Նախարարության 2020թ.-ի առաջին կիսամյակի դրամարկղային և փաստացի ծախսերի ելակետային ցուցանիշներով, ըստ ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված նյութերի (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, հավելված 6-2), պլանը և ճշտված պլանը արտադպրոցական հիմնարկների հանրագումարով կազմում են 1,064,421.9 հազար դրամ: Նախարարության կողմից սահմանված կարգով հաստատագրված պլանի նկատմամբ 101,206.1 հազար դրամի և ճշտված պլանի հետ՝ 209,379.3 հազար դրամի, տարբերությունները:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարության կողմից սահմանված կարգով հաստատագրված պլանի նկատմամբ 101,206.5 հազար դրամի տարբերությունը կազմում է բյուջեով հաստատված պլանի և փաստացի կնքված պայմանագրերի տարբերությամբ՝ պայմանավորված համավարկի պատճառով չիրականացված որոշակի միջոցառումներով: Իսկ ճշտված պլանի հետ՝ 209,379.3 հազար դրամի տարբերությունը ֆինանսավորման և ճշտված պլանի տարբությունն է:
8	Ծրագիր 7-ում ներկայացումների քանակի 685-ով (65,2%) և հանդիսատեսի թվաքանակի 94536-ով (56,7%) նվազման, նոր ներկայացումների քանակի 11-ով (57,9%), կրճատման, իսկ Ծրագիր 8-ում ներկայացումների քանակի 163-ով (74,1%) և հանդիսատեսի թվաքանակի 52098-ով (73,7%) նվազման և նոր ներկայացումների քանակի 3-ով (30,0%) կրճատման պայմաններում 2020թ. առաջին կիսամյակի փաստացի և դրամարկղային ծախսերի համապատասխանաբար՝ 25,211.8 և 46,294.8 հազ. դրամներով դրական տարբերությունների արձանագրումը պարզաբանումների և բացատրությունների կարիք ունի: 2020թ. 2-րդ եռամսյակում արտակարգ դրության իրավիճակում թատերական ներկայացումներ չեն իրականացվել, իսկ համերգներից իրականացվել են ընդամենը 10-ը: 2020 թ-ի առաջին եռամսյակում, միաժամանակ, նոր ներկայացումների քանակն առաջին եռամսյակի թվով 6-ի փոխարեն առաջին կիսամյակով ներկայացվել է 8-ը (Տրամադրված տեղեկատվությունը ճշգրտման կարիք ունի): Համադրելով հիշատակված ոչ ֆինանսական տեղեկատվությունը 2020թ. երկրորդ եռամսյակում փաստացի ծախսված գումարների հետ, առաջանում են հնարավոր:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարությունը ընդունել է ի գիտություն, հանդիսատեսների քանակի նվազեցման հետ կապված տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, որը 2020 թ. ինն ամսվա դրությամբ ուղղվել է:

9	Նախարարության Ծրագիր 9-ի թվով 17 մանկավարժա-հոգեբանական կենտրոններում ըստ ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչների 2020թ.-ի առաջին կիսամյակում նախատեսված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման համար գնահատվող երեխաներ» բաղադրիչը նվազել է 595 աշակերտով (նախատեսված 1000-ի փոխարեն 405, 59,5%), իսկ «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ ստացող երեխաներ» ցուցանիշը՝ 1994 ով (նախատեսված 5700-ի փոխարեն 3706, 53,8%): Նշված տարբերությունները պայմանավորված են երկրում կորոնավիրուսային համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով: Ինչ վերաբերում է ուսումնական նյութերի մշակման, հրապարակման և ձեռքբերման աշխատանքներին, ապա դրանք, ինչպեսառաջին եռամսյակում, այնպես էլ՝ առաջին կիսամյակի տվյալներով, հետաձգվել և նախատեսվում են իրականացնել 2020թ. չորրորդ եռամսյակում:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	Նախարարությունը ընդունել է ի գիտություն, ձեռնարկվող միջոցառումները կներկայացվեն մինչև տարեվերջ:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Նախարարությանը.

8.1 Հսկողություն սահմանել իր ենթակայության օբյեկտների վրա գնման գործընթացների օրինականության պահպանման առումով, մասնավորապես.

8.1.1 «Գնանշման հարցում» ընթացակարգով կատարված գնման ընթացքում հայտերի գրանցման գրանցամատյանի բնօրինակից արտատպված տարբերակի և շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակից արտատպված տարբերակի՝ «Procurement. am» տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) հրապարակումը իրականացնել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ-ի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջներին համապատասխան:

8.1.2 «Մեկ անձ» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում պահանջվող տեղեկությունների հրապարակումը Տեղեկագրում իրականացնել Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2–րդ ենթակետի պահանջներին համապատասխան:

8.1.3 «Մեկ անձ» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով հրավերների ուղարկման գործընթացները իրականացնել Որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1–ին ենթակետի «Դ» պարբերության պահանջներին համապատասխան:

8.1.4 Տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում հայտարարելու ընթացակարգերը իրականացնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի «Գ» ենթակետի, 3-րդ և 4-րդ կետի պահանջներին համապատասխան:

8.1.5 «Մեկ անձ» ընթացակարգով կատարված գնումների ընթացքում գնման հրավերներi, պայմանագիր կնքելու մասին հայտարարությունների Տեղեկագրում հրապարակման կանոնակարգերը իրականացնել Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջներին համապատասխան:

8.1.6. Գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերի, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերների գծով կատարվող գործառույթները համապատասխանեցնել Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

8.2 Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, միջոցառումներ ձեռնարկել ստեղծելու, պարբերաբար թարմացնելու և վարելու Նախարարության Ծրագիր 1-ի և Ծրագիր 2–ի (ուսանողական նպաստ ստացող սովորողների, ուսանողների և անձնակազմերի գծով), Ծրագիր 4-ի (ուսանողական նպաստ ստացող ուսանողների գծով), Ծրագիր 3-ի, Ծրագիր 6-ի, Ծրագիր 7-ի և Ծրագիր 8-ի շահառուների (անձնակազմերի գծով) անհատական տվյալների առանձնացված, հերթապահ բազաներ-շտեմարաններ:

8.3 Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ժամկետների, ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերին համապատասխանության և ճշգրտության առումներով:

8.4 Միջոցառումներ ձեռնարկել և առաջարկություններ ներկայացնել Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի համար տարեկան ֆինանսավորումների համար բազային իրավական ակտեր, սահմանված նորմեր և գործակիցներ ստեղծելու ուղղությամբ:

8.5 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց:

9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

Արձանագրություն

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 191-Ա որոշմամբ հաստատված առաջադրանքի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության հաշվեքննության» շրջանակներում հաշվեքննության օբյեկտի կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչությանը տրամադրված տեղեկատվության վերաբերյալ

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հունվարի 8-ի թիվ ՀՊԵ ԱԲ-159 գրությամբ հաշվեքննության օբյեկտից (ՀՀ ԿԳՍՄՆ) պահանջվել է հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով՝ սահմանված հետևյալ տեղեկատվությունը.

1. (1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի 2020 թ. ինն ամիսների թվով 53 ՊՈԱԿ – ների պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների, 01.10. 2020թ.-ի դրությամբ սովորողների (տեղափոխվածների, ավարտողների, տարկետումների և այլն անհատական տվյալների վերաբերյալ:

2. (1045-12004) «Միջին մասնագիտական կրթության ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի 2020թ. ինն ամիսների թվով 79 ՊՈԱԿ–ների պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների, 01.10.2020թ.-ի դրությամբ ուսանողների (տեղափոխվածների, ավարտողների, տարկետումների և այլն) անհատական տվյալների վերաբերյալ:

3. (1075-11004) «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրի 2020թ. ինն ամիսների թվով 21 ՊՈԱԿ–ների պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների վերաբերյալ:

4. (1111-12004) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի 2020 թ. ինն ամիսների թվով 29 բուհերի ուսանողական նպաստ ստացող նպաստառուների՝ ըստ նպաստի ուղղությունների, քանակագումարային և անհատական տվյալների վերաբերյալ:

5. 1146-11003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» ծրագրի 2020թ. ինն ամիսների թվով 108 ավագ դպրոցների պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների, ինչպես նաև 2020 թվականի հունվար և սեպտեմբեր ամիսների

դրությամբ աշակերտների կոմպլեկտավորումների, ֆինանսական հաշվարկների, իրականացված վերաբաշխումների վերաբերյալ թղթային և էլեկտրոնային տարբերակով:

6. (1168-11003) «Արվեստների ծրագիր» (Թատերական ներկայացումներ) ծրագրի 2020թ. ինն ամիսների թվով 13 ՊՈԱԿ-ների պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների վերաբերյալ»

7. (1168-11004) «Արվեստների ծրագիր» (Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ) ծրագրի 2020թ. ինն ամիսների թվով 11 ՊՈԱԿ-ների պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների վերաբերյալ:

8. (1168-11001) «Արվեստների ծրագիր» (Օպերային և բալետային արվեստի ներկայացումներ) ծրագրի 2020թ. ինն ամիսների թվով 11 ՊՈԱԿ-ների պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների վերաբերյալ:

9 (1192-32002) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում» /ԿՏԱԿ/ ծրագրով 2020թ. ինն ամիսների թվով 11 ՊՈԱԿ-ների պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների և գնումների վճարային գործընթացների վերաբերյալ:

10. Նախարարության 2020թ. ինն ամիսների թվով 9 ծրագրերի պլանների, ճշտված պլանների, ֆինանսավորման, դրամարկղային և փաստացի ծախսերի, տարեսկզբի և հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների տարբերությունների, շեղումների պարզաբանումների, բացատրությունների և մեկնաբանությունների գծով:

11. Նախարարության 2020թ. ինն ամիսների եկամուտների (պետական տուրքերի, շահաբաժինների. վարձակալությունների և այլն) վերաբերյալ:

Նախարարության կողմից երկու գրությամբ ստացվել են.

1. Նախարարության 2021 թվականի հունվարի 21-ի թիվ 01/17.2/843-21 գրությամբ ստացված սկավառակում առկա են.

«Ardir.rar» արխիվային գրադարան (ստեղծված 25.01.2021թ.) հետևյալ պարունակությամբ.

1.1 (1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի մասով (ստեղծված 21.01.2021թ.) տեղեկատվությունը տրամադրվել է թերի, 01.10.2020թ.-ի դրությամբ սովորողների (տեղափոխվածների, ավարտողների, տարկետումների և այլն անհատական տվյալների մասերով տեղեկատվությունը բացակայում է:

1.2 (1045-12004) «Միջին մասնագիտական կրթության ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի մասով (ստեղծված 21.01.2021թ.): Տեղեկատվությունը տրամադրվել է թերի, 01.10.2020թ.-ի դրությամբ ուսանողների (տեղափոխվածների, ավարտողների, տարկետումների և այլն) անհատական տվյալների մասերով տեղեկատվությունը բացակայում է)»

1.3 (1075-11004) «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրի մասով (ստեղծված 21.01.2021թ.): Տեղեկատվությունը տրամադրվել է ամբողջությամբ:

1.4 (1111-12004) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրի մասով (ստեղծված 21.01.2021թ.): Տեղեկատվությունը չի տրամադրվել:

1.5 (1146-11003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» ծրագրի մասով (ստեղծված 21.01.2021թ.): Տեղեկատվությունը չի տրամադրվել:

1.6. (1168-11003) «Արվեստների ծրագիր» (Թատերական ներկայացումներ) ծրագրի մասով (ստեղծված 21.01.2021թ.): Տեղեկատվությունը տրամադրվել է ամբողջությամբ):

1.7 (1168-11004) «Արվեստների ծրագիր» (Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ) ծրագրի մասով (ստեղծված 21.01.2021թ.) Տեղեկատվությունը տրամադրվել է թերի, բացակայում է «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ-ի գծով տեղեկատվությունը:

1.8 (1168-11001) «Արվեստների ծրագիր» (Օպերային և բալետային արվեստի ներկայացումներ) ծրագրի մասով (ստեղծված 19.01.2021թ.): Տեղեկատվությունը տրամադրվել է ամբողջությամբ:

1.9 (1192-32002) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում» /ԿՏԱԿ/ ծրագրի մասով (ստեղծված 19.01.2021թ.): Տեղեկատվությունը տրամադրվել է ամբողջությամբ:

1.10 Նախարարության 2020թ. ինն ամիսների թվով 9 ծրագրերի նասով (ստեղծված 21.01.2021թ.) Տեղեկատվությունը տրամադրվել է ամբողջությամբ:

1.11 Նախարարության 2020թ. ինն ամիսների եկամուտների (պետական տուրքերի, շահաբաժինների. վարձակալությունների և այլն) մասով (ստեղծված 22.01.2021թ.) Տեղեկատվությունը տրամադրվել է ամբողջությամբ:

2. Նախարարության 2021 թվականի փետրվարի 1-ի թիվ 01/10.1/1360-21 գրությամբ ստացված սկավառակում թվով երկու հետևյալ արխիվային գրադարաններում առկա են.

2.1 1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով (ստեղծված 01.02.2021թ.) ուսումնարանների վերաբերյալ տեղեկատվություններ՝ 2 թղթապանակ, 81 էքսելի և 1 PDF ֆայլ պարունակությամբ: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է թերություններով, մասնավորապես՝ հանրային ծառայությունների համարանիշների մասով:

2.2 (1045-12003) «Միջին մասնագիտական կրթության ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով (ստեղծված 01.02.2021թ.) քոլեջների վերաբերյալ տեղեկատվություններ՝ 52 էքսելի ֆայլ պարունակությամբ: Լրացուցիչ տեղեկատվությունը

ներկայացված է թերություններով, մասնավորապես՝ հանրային ծառայությունների համարանիշների մասով:

3. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հունվարի 8-ի թիվ ՀՊԵ ԱԲ-159 գրության 5-րդ կետով պահանջվող (1146–11003) «Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» ծրագրի վերաբերյալ 2020 թվականի հունվար և սեպտեմբեր ամիսների դրությամբ աշակերտների կոմպլեկտավորումները, դպրոցների ֆինանսավորման հաշվարկները և իրականացված վերաբաշխումները Նախարարությունից ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով չեն ստացվել:

Նախարարության 2021 թվականի փետրվարի 16-ի թիվ 01/17.2/2730-21 գրության տեղեկանքում զետեղված «*Պահանջվող տեղեկատվությունը էլեկտրոնային կրիչով Հանրակրթություն թղթապանակի մեջ ներկայացվել է հաշվեքննության խմբի ղեկավարին*» գրառումը իրականությանը չի համապատասխանում: